ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

26 օգոստոսի 2014 թվականի N 112-Ա

Լ. ԽՈՑԱՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի և 164-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով ***Լ. Խոցանյանի*** անձնական դիմումը՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Ձորադրյուրի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն ***Լյուդմիլա Խոցանյանին*** տրամադրել 2014 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդի չօգտագործած մասը՝ տաս աշխատանքային օր՝ 2014 թվականի սեպտեմբերի 9-ից մինչև սեպտեմբերի 23-ը ներառյալ:

2. ***Լյուդմիլա Խոցանյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Ձորադրյուրի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել ընկերության ընտանեկան բժիշկ՝ ***Գայանե Գորգյանի*** վրա:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2014 թվականի օգոստոսի 26
ք. Հրազդան